# Մայրիկին յազմա բերին / Mayrikin yazma berin

Շիրակ
Shirak

Ասելով
**Parlare**



1. Մայրիկին յազմա բերին,
   Քույրիկին փուչի.
   Հայրիկին փոստե փափախ,
   Կատար չունենա։

   *Տո՛, յամա՛ն, ամա՛ն,*
   *Տո՛, յամա՛ն, ամա՛ն,*
   *Տո՛, յամա՛ն, ամա՛ն,*
   *Տո՛, յամա՛ն, ամա՛ն։*
   *Մաշիկո՛վ աղջիկ,*
   *Կոշիկո՛վ աղջիկ.*
   *Քու դեյրեն կարճ է,*
   *Շեկ տըղի խարճ է։*

2. Մայրիկին խաս կըտրեցին,
   Քույրիկին խըրխա.
   Հայրիկին սալդաթի շինել,
   Թևեր չունենա։

   *Տո՛, յամա՛ն...*

3. Մայրիկին կոշիկ բերին,
   Քույրիկին տուֆլի.
   Հայրիկին ջուխտակ չարուխ,
   Տակ էլ չունենա։

   *Տո՛, յամա՛ն...*

4. Մայրիկին ֆայտոն բերին,
   Քույրիկին կառետ.
   Հայրիկին Տլոտի կաչկա,
   Ակեր չունենա։

   *Տո՛, յամա՛ն...*

1. Mayrikin yazma berin,
   K'uyrikin p'uch'i:
   Hayrikin p'oste p'ap'akh,
   Katar ch'unena.

   *To, yaman, aman,*
   *To, yaman, aman,*
   *To, yaman, aman,*
   *To, yaman, aman.*
   *Mashikov akhch'ik,*
   *Koshikov akhch'ik:*
   *K'u deyren karch e,*
   *Shek təghi kharch e.*

2. Mayrikin khas kətrets'in,
   K'uyrikin khərkha:
   Hayrikin saldat'i shinel,
   T'ever ch'unena.

   *To, yaman...*

3. Mayrikin koshik berin,
   K'uyrikin tufli:
   Hayrikin jukhtak ch'arukh,
   Tak el ch'unena.

   *To, yaman...*

4. Mayrikin fayton berin,
   K'uyrikin karret:
   Hayrikin Tloti kach'ka,
   Aker ch'unena.

   *To, yaman...*